ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՓԱՇԱՅԱՆ ԱՐԱՔՍ ԱՍԱՏՈՒՐԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ (1969-2001թթ.)

Է. 00.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2002

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ՝ Ն. Հ. Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆ.՝ Վ. Ա. Բայբուրդյան

պատմական գիտությունների թեկնածու՝
Ռ. Կ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոն

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. ապրիլի 4-ին ժ. 14-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող 006 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 գ.):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2002թ. մարտի 4-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ Ս. Կ. Բաղդասարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) կառուցվածքի, հիմնական նպատակների, սկզբունքների, քաղաքական գործունեության, ինչպես նաև՝ գաղափարական-քաղաքական հայեցակարգի ուսումնասիրությունն ունի ոչ միայն կարևոր գիտական, այլև քաղաքական ու գործնական նշանակություն:

Միջազգային հարաբերությունների արդի փուլում Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքական գործընթացների վրա գնալով ավելի զգալի է դառնում իսլամի՝ կրոնի և իսլամական գաղափարախոսության անմիջական ազդեցությունը, արժեվորվում է իսլամի դերը պետական համակարգում, իսլամական պետությունների ներքին և արտաքին քաղաքական սկզբունքների ձևավորման մեջ, որով ուրվագծվում է ուժերի նոր հարաբերակցություն:

Ակնհայտ է դառնում նաև ԻԿԿ շրջանակներում միասնական իսլամական քաղաքականություն իրականացնելու իսլամական պետությունների հարաճուն ցանկությունը:

1960-80-ականներին միջազգային հարաբերություններում իսլամի ներգործությամբ լայն թափ ստացան իսլամական համերաշխության շարժումները, ընդլայնվեց և ամրապնդվեց իսլամական պետությունների համագործակցությունը ոչ միայն երկկողմ հարաբերությունների շրջանակում, այլև ողջ աշխարհի մակարդակով, ներառյալ ոչ իսլամական պետություններում իսլամական փոքրամասնությունները:

Միասնական իսլամական քաղաքականության իրականացումը և միջազգային իսլամական բլեռի ձևավորումը, որի ակունքներում պանիսլամիզմի գաղափարախոսությունն է, ամրագրվեց 1969թ. Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծմամբ:

Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում սկզբնավորվեց իսլամական պետությունների համագործակցությունը քաղաքական, տնտեսական, գաղափարական, մշակութային և կենսական այլ կարևոր բնագավառներում: ԻԿԿ-ն կոորդինացրեց մահմեդական ժողովուրդների և պետությունների համընդհանուր հետաքրքրությունների շրջանակը:

Իսլամական աշխարհի ամենախոշոր, կառավարական մակարդակով միակ կազմակերպությունը՝ ԻԿԿ-ին, անդամակցելու իրավունքը վերապահվում է միայն իսլամական պետություններին: Ներկայումս ԻԿԿ-ին անդամակցում են 57 պետություններ՝ արաբական, ինչպես նաև ասիական, եվրոպական և աֆրիկյան գրեթե բոլոր իսլամադավան

պետությունները: ԽՄՀՄ-ի փլուզումից հետո կազմակերպությանն անդամակցեցին նաև Ադրբեջանն ու կենտրոնականասիական բոլոր մահմեդական հանրապետությունները՝ Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: 1990-ականների սկզբին կազմակերպությանն անդամակցեց նաև Ալբանիան, ԻԿԿ-ի հետ սկսեց համագործակցել Բոսնիայի և Հերցեգովինայի Հանրապետությունը: Կազմակերպության աշխարհաքաղաքական սահմանները ավելի ընդլայնվեցին:

ԻԿԿ գործունեությամբ ամրապնդվեց դեռևս իսլամի տարածման սկզբնական շրջանում ձևավորված իսլամական ազգի՝ Ումմայի, գաղափարը, համաձայն որի բոլոր մահմեդականներին միավորում է նույն կրոնը՝ իսլամը, որոնք կազմում են մեկ՝ «իսլամական ազգ» հասկացությունը, անկախ ազգային և էթնիկ պատկանելությունից: ԻԿԿ գաղափարախոսությունը խարսխվեց իսլամական միասնության և եղբայրության գաղափարների վրա:

Իսլամական Ումմայի սկզբունքը պաշտոնապես հայտարարվեց ԻԿԿ Տաիֆի գագաթաժողովում, 1981-ին: Մահմանվեցին իսլամի երբեմնի փառքի և քաղաքակրթության ամրապնդման, ինչպես նաև աշխարհում ազդեցիկ և տիրապետող դիրքեր նվաճելու մահմեդական ժողովուրդների պարտավորությունները:

Ակնհայտ է, որ ԻԿԿ-ի ստեղծումը և գործունեությունը պայմանավորված է միջազգային հարաբերություններում իսլամի քաղաքականացման հանգամանքով, որը նկատի է առնում իսլամի քաղաքական նշանակության և դերի մեծացումը քաղաքական գործընթացների մեջ:

ԻԿԿ-ն գործունեության բոլոր բնագավառներում պարտավորվում է առաջնորդվել իսլամի դրույթներով, քանի որ, ինչպես հավատացած են նրանք, իսլամը կարող է հանդես գալ իբրև աշխարհի զարգացման հիմնական ուղղություն: Այս ռազմավարության նպատակը, թեև հիմնվում է կրոնական գործոնի վրա, քաղաքական բնույթ ունի և կոչված է ծառայելու իսլամական երկրների դիվանագիտությանը:

Իսլամական համագործակցության շրջանակներում ԻԿԿ-ն աջակցում է մահմեդականներին առնչվող հիմնահարցերին և հակամարտություններին: Բացի այդ, ԻԿԿ-ն անդամ բոլոր երկրներում իրականացնում է ֆինանսական, տնտեսական, մշակութային, սոցիալական տարբեր ծրագրեր, որոնք ներառում են նաև ոչ իսլամական պետություններում մահմեդական փոքրամասնությունները:

Միջազգային իրավունքի շրջանակներում ԻԿԿ-ն ձգտում է ներկայանալ որպես մի ինքնատիպ «Միացյալ իսլամական ազգերի կազմակերպություն»:

ԻԿԿ գործունեության մանրակրկիտ ուսումնասիրությամբ էլ ավելի տեսանելի ու ընկալելի են դառնում միջիսլամական համագործակցության գաղափարական-քաղաքական

հիմքերն ու մի շարք առանձնահատկությունները, բացահայտվում միջիսլամական համագործակցության հեռանկարները:

Իր աշխարհագրական դիրքի պատճառով Հայաստանը ներգրավված է Արևելքի քաղաքական և տնտեսական հարաբերությունների ոլորտում: Այդ իսկ պատճառով Հայաստանը պետք է պատրաստ լինի դեպքերի հեռանկարային զարգացմանը, ինչպես նաև՝ հաշվի առնի միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի հնարավոր ազդեցությունը:

Մերձավոր և Միջին Արևելքի իսլամական երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացները Հայաստանի համար կարևորվում են նաև այդ պետություններում մեծաքանակ հայկական համայնքների գոյության փաստով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԻԿԿ-ն մշտապես անդրադառնում է Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությանը, որը սույն աշխատության հիմնահարցերից մեկն է:

Հաշվի առնելով վերը նշվածը, հասկանալի է դառնում թեմայի ընտրության խիստ արդիականությունը:

Թեմայի արդիականությունը կարևորվում է այն հանգամանքով, որ իսլամի չափազանց հարաճուն քաղաքականացումը վճռորոշ գործոն է դարձել միջազգային ներկա հարաբերություններում: Այդ են վկայում 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած աննախադեպ ահաբեկչական գործողությունները, որոնք մեկ անգամ ևս ապացուցեցին, որ իսլամը շարունակում է քաղաքական կարևոր նշանակություն ունենալ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության թեման ընտրվել է Իսլամական կոնֆերանս կազմակերպության 1969-2001թթ. գործունեության և դրա առանձնահատկությունների հետազոտման և դրանց ամբողջական բնութագրումից ելնելով, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները:

- Ուսումնասիրել ԻԿԿ կառուցվածքը, նրա գլխավոր մարմինների ֆունկցիաները և դերը միջազգային իսլամական շարժման գործում:
- Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների և այլ նյութերի հիման վրա բացահայտել Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեության մեխանիզմներն ու ընթացքը 1969-2001թթ. միջև ընկած ժամանակահատվածում:
- Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում բացահայտել միջազգային իսլամական համագործակցության ամենատարբեր դրսևորումները, ինչպես նաև իսլամական ինտեգրացման գործընթացների ուղիները, եղանակները ու հեռանկարը:
- Լուսաբանել Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգը, քննարկել «իսլամական ազգ» հասկացության՝ Ումմայի, ինչպես նաև իսլամական միասնության գաղափարական հիմքերը:

- Ցույց տալ Իսլամական կոնֆերանս կազմակերպության դերը համաիսլամական ընդհանուր քաղաքականություն մշակելու և իսլամական համերաշխության շարժման հարցում:
- Նոր տվյալների և աղբյուրների հիման վրա ուսումնասիրել մահմեդականներին առնչվող հակամարտությունների նկատմամբ կազմակերպության դիրքորոշումը:
- Բացահայտել Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության նկատմամբ Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը, այն քննարկել Հայաստանի և իսլամական աշխարհի միջև հարաբերությունների զարգացման համատեքստում:

3.ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԹԸ:

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: ԻԿԿ կազմավորման, նրա կառուցվածքի, գլխավոր մարմինների, քաղաքական, ֆինանսա-տնտեսական, մշակութային գործունեության, ինչպես նաև՝ միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի խնդիրները քննարկվել են որոշ հայ և օտարազգի հեղինակների կողմից, սակայն ԻԿԿ գործունեությունը, որպես այդպիսին, չի ներկայացվել առանձին աշխատանքով: Մերձավոր և Միջին Արևելքի քաղաքականության ոլորտի մասնագետները առաջնահերթությունը տվել են ԻԿԿ առանձին խնդիրների ուսումնասիրությանը:

Ներկա աշխատությունը իր բովանդակությամբ և հարցադրումներով հայրենական արևելագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանիորեն վերլուծության են ենթարկվում ԻԿԿ ստեղծման պատմական նախադրյալները, կազմավորումը, հիմնական սկզբունքները, նպատակները, ինչպես նաև գլխավոր մարմինների, կից և օժանդակ կառույցների և ԻԿԿ քաղաքական գործունեությունը:

Ատենախոսության մեջ ուսումնասիրվում է նաև ԻԿԿ դիրքորոշումը 1969-2001թթ. մահմեդականներին առնչվող հակամարտությունների և քաղաքական կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ:

Հատուկ ուշադրություն է նվիրված ԻԿԿ գաղափարական-քաղաքական հայեցակարգի լուսաբանման խնդիրներին, որպես կազմակերպության գործունեության ամենակարևոր հանգամանքներից մեկը:

Գիտական նորույթ է ատենախոսության էջերում ղարաբաղյան հակամարտության նկատմամբ ԻԿԿ դիրքորոշման բացահայտումը, քննարկվող հարցի հիմնական ուղղությունների սահմանումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և իսլամական աշխարհի միջև հարաբերությունների զարգացման հեռանկարի քննարկումը՝ հաշվի առնելով ԻԿԿ-ի գործոնը:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ:

Ժամանագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1969-2001թթ. ժամանակահատվածը՝ 1969թ. ԻԿԿ կազմավորումից մինչև մեր օրերն ընկած շրջանը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեմայի ժամանակագրությունը ներառում է կազմակերպության կայացման և գործունեության հիմնական շրջանը:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ :

Ատենախոսության մեթոդաբանության հիմքում դրված են Իսլամական կոնֆերանս կազմակերպության ստեղծման, կայացման, գործունեության և խնդիրների հետ կապված հարցադրումների և կարծիքների քննական մեկնությունը և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Սույն ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները, նյութերը և տվյալները կարող են օգտագործվել Իսլամական կոնֆերանս կազմակերպության, ինչպես նաև՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում քաղաքական գործընթացների, տվյալ ժամանակաշրջանի քաղաքականության պատմության հիմնախնդիրներին նվիրված դասընթացներում կամ ուսումնասիրություններում: Աշխատության եզրահանգումները օգտակար կարող են լինել պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպության նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշ հարցեր մշակելու տեսանկյունից:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում, նրա հիմնական դրույթներն ու եզրակացությունները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում և թեզերում՝ Երիտասարդ արևելագետների հանրապետական XX, XXI, XXII և Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտում կայացած գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

Հեղինակի հրատարակած հիմնադրույթների ու հոդվածների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն լեզուներով աղբյուրների և ուսումնասիրության հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրատարակությունները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու պարբերականները:

Ուսումնասիրության համար որպես սկզբնաղբյուրներ են ծառայել Իսլամական կոնֆերանս կազմակերպության Ռաբաթի 1969թ., Լահորի 1974թ., Տաիֆի 1981թ.,

Կասաբլանկայի 1994թ, Թեհրանի 1997թ. և այլ զագաթաժողովների, ինչպես նաև ԻԿԿ արտաքին գործերի նախարարների ամենամյա կոնֆերանսների որոշումները, բանաձևերն ու հայտարարությունները[1]:

Գոյություն ունեցող սկզբնաղբյուրների մեջ կարևորվում են նաև Իսլամական կոնֆերանս կազմակերպության կանոնադրությունը[2], օժանդակ մարմինների և կից կառույցների մասին գոյություն ունեցող նյութերը, ինչպես նաև՝ ԻԿԿ շրջանակներում տեղի ունեցած ֆորումներում անդամ պետությունների առանձին քաղաքական գործիչների հայտարարությունները:

Մյուս կարևոր աղբյուրը արաբական զանազան պարբերականներն են, հատկապես Եգիպտոսի, Լիբանանի, Սիրիայի, Սաուդյան Արաբիայի, որոնցից հարկ է նշել՝ «ալ-Ահրամը», «ան-Նահարը», «ալ-Լիուան», «աս-Սաֆիրը», «ալ-Բաասը», «աշ-Շարկ ալ-Աուսատը» և այլն, ուր տեղ են գտել ԻԿԿ հայտարարություններն ու որոշումները՝ համապատասխան մեկնաբանություններով:

Ատենախոսության մեջ օգտագործվել են ՀՀ արտաքին գործերի նախարարության նյութերը: Դրանք դարաբաղյան հակամարտության վերաբերյալ ԻԿԿ-ի որոշումներն ու հայտարարություններն են, ինչպես նաև՝ Հայաստանի իշխանությունների և դիվանագետների թղթակցությունները, որոնք վերաբերում են ԻԿԿ շրջանակներում դարաբաղյան հակամարտության լուսաբանմանը:

Հայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են, մասնավորապես, խորհրդային հետազոտողների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր և Միջին Արևելքի պատմության և արտաքին քաղաքական հարցերի վերաբերյալ տպագրված մենագրությունները, ժողովածուներն ու պարբերականները:

Հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը լավագույնս ուսումասիրել է միջազգային հարաբերություններում իսլամի քաղաքականացման դրսևորումները, այդ համատեքստում առաջին անգամ քննարկելով իսլամի գլոբալ ռազմավարությունն ու ԻԿԿ-ի գործունեությունը, ինչի օրինակ կարող են լինել արևելագետ Ն. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները[3]:

Խորհրդային հեղինակների հրատարակությունների շարքում հարկ է հիշատակել Գ. Միլոսլավսկու, Տ. Միլոսլավսկայայի, Ա. Իոնովայի, Ի. Իվանովայի, Լ. Վալկովայի, Ա. Վասիլևի, Ա. Իգնատենկոյի, Ն. Ժդանովի, Ե. Դորոշենկոյի, Մ. Ֆիլիպովայի, Ռ. Շարիպովայի, Պ. Միշենկոյի, Է. Նաջիպի, Վ. Սիչևի, Լ. Բորիսովի, Ռ. Հասանովի

[1] The Organization of Islamic Conference http://www.oic-un.org

[2] The Islamic Summit Conference. Sixth Issue. Revised Edition, Kuwait News Agency, 1981, p. 38-54.

[3] Оганесян Н., Активизация ислама: характер, специфика и последствия. В книге: Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ер., 1986, его же, Глобальная стратегия ислама: основополагающие принципы и конечные цели, "Вестник общесвенных наук", Ер., 1989, No. 1.

ուսումնասիրությունները, որոնք առնչվում են ԻԿԿ-ի ստեղծմանը, նրա սկզբունքներին, նպատակներին և գործունեության զանազան կողմերին[4]:

Մերձավոր Արևելքի առանձին խնդիրների, ինչպես նաև արաբա-իսրայելական հակամարտության ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեցան Ե. Պրիմակովի[5], Ե. Դմիտրևի, Բ. Լադեյկենի[6], Դ. Պիռլինի[7] և այլոց մենագրությունները:

Աշխատանքի մեջ հեղինակն օգտագործել է Իսլամական կոնֆերանս կազմակերպության հայտնի քաղաքական և մշակութային գործիչներից մեկի՝ Է. Իհսանօղլու հետազոտությունը, ուր ներկայացված է ԻԿԿ-ի սկզբնավորումը, ինչպես նաև՝ Թուրքիայի գործունեությունը այդ կազմակերպության շրջանակներում[8]:

Արաբական ազգայնականության գաղափարներն է քննարկում Ա. Հուրանին «Արաբական միտքը միջին դարերում (1798-1939)» մենագրության մեջ, ուր մանրամասն քննության է ենթարկվում արաբական հասարակական–քաղաքական մտքի զարգացման փուլերը և առանձնահատկությունները, ի մի է բերվում այդ շրջանի հայտնի տեսաբանների՝ Մուհամեդ Աբդոյի, Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիի, Ռաշիդ Ռիդաայի և այլոց մոտեցումները[9]: Հիշյալ խնդիրներին է անդրադարձել նաև Զ. Լևինը[10]:

Իսլամի տեսական դրույթները, ինչպես նաև նրա քաղաքականացման դրսևորումները քննարկելիս հեղինակին մեծապես օգնել են Աբդուլ Ալա Մաուդուդիի[11], Հ. Գիբբի[12], Է.

[4] Милославский Г., Интеграционные процессы в мусульманском мире, М.,1992, его же, Содержание понятия "исламский фактор" в современных международных отношениях ("Исламский фактор" в современных международных отношениях в Азии, М., 1987), Миловславская Т., Миловславский Г., Некоторые вопросы теории и практики финансово-экономической деятельности ОИК (Ислам: проблемы идеологии, права, политики и экономики, М., 1985), их же, Концепции "исламского единста" и интеграционные процессы в "мусульманском мире" (Ислам и прблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986), Ионова А., Ислам и международное экономическое сотрудничество, "Азия и Африка сегодня", 1983, N. 3, Иванова И., Турецко-арабские отношения и их место в системе международных связей на Ближнем Востоке (1945-1983), М., 1985, Валькова Л., Саудовская Аравия в международных отношениях, М, 1979, ее же, Саудовская Аравия:нефть, ислам, политика, М., 1987, Васильев А., История Саудовской Аравии, М.,1982, Жданов Н., Игнатенко А., Ислам на пороге XXI века, М.,1985, Филипова М., Оценка американскими учеными "исламского фактора" в международных отношениях ("Исламский фактор" в международных отношениях в Азии), Мищенко П., Проблема урегулирования ближневосточного конфликта в деятельности ОИК, Зарубежный мир, Вып II, Киев 1986, Наджип Э., XII сессия (Нигер, 1982) (Современный ислам: проблемы политики и экономики, Вып. 2, М., 1983), Сычев В., Новые тенденции в деятельности Организация исламской конференции (ОИК) (Современный ислам: проблемы политики и экономики, Вып. , М., 19), Борисов Л., Организация Исламская Конференция: политические аспекты деятельности, "Народы Азии и Африки", 1983, N. 4, Хасанов Р., Организация Исламская Конференция и мусульманские государства СНГ, ЦентральнаяАзия и Кавказ, 1997, N. 11 http://www.ca-org,

[5] Примаков Е., Восток после краха колониальной системы, М., 1982, его же, Анатомия ближневосточного конфликта, М., 1978, նույնի՝ Մի դավադրության պատմություն, Եր., 1987:

[6] Дмитрев Е, Ладейкен В., Путь к миру на Ближнем Востоке, М., 1974, Дмитрев Е, Палестинский узель, М., 1978:

[7] Пырлин Е.. Ближневосточный лабиринт, М., 1996,

[8] Ihsanoglu E., Turkey in the Organization of the Islamic Conference: An Overview, Recent Developments, Edited by K. H. Karpat, Medison, 1996.

[9] Hourani A, Arabic Thought in the Liberal Age. 1978-1939, Oxford University Press, L.-N.Y., 1970.

[10] Левин З, Развития арабской общественной мысли, М., 1984,

[11] Mawdudi A., Towards Understanding Islam, L., 1980.

[12] Gibb H., Islam, L., 1978.

Ռոզենտալի[13], Ա. Պետրուշևսկու[14], Մ. Ստեփանյանցի[15], Ռ. Շարիպովայի,[16], Օ. Օդայի[17] և այլոց ուսումնասիրությունները:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթաբաժիններից), եզրափակումից, օգտագործված գրականության և աղբյուրների ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ խոսվում է ատենախոսության թեմայի արդիականության, նպատակների ու խնդիրների մասին, հիմնավորվում է աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, տրվում է օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ», անդրադառնում է ԻԿԿ-ի ստեղծման պատմական նախադրյալներին ու հիմնադրմանը, նրա կառուցվածքի, հիմնական սկզբունքների և նպատակների, ինչպես նաև՝ կից և օժանդակ կառույցների ուսումնասիրությանը:

Գլխի <u>առաջին ենթաբաժնում</u> քննարկվում են համաիսլամականության գաղափարական հիմքերը, որոնք նախադրյալներ ստեղծեցին ԻԿԿ-ի կազմավորման համար: Իսլամական միասնության և համերաշխության հիմքում պանիսլամիզմի տեսությունն է, որը ձևավորվեց 19-րդ դարի 60-ականներին, երբ Ասիայի և Աֆրիկայի իսլամադավան երկրները գաղութային վիճակում էին: Պանիսլամիզմի տեսաբանների կարծիքով, իսլամից բացի ոչ մի ուժ չէր կարող պայքարել արևմտյան գաղութատիրության դեմ և միավորել ողջ աշխարհի մահմեդականներին: Պանիսլամիզմն առաջ էր քաշում Խալիֆաթի ներքո իսլամական աշխարհի կրոնաքաղաքական, տնտեսական և մշակութային սերտ համագործակցության գաղափարը: Սակայն առաջին աշխարհամարտից հետո Խալիֆաթը խորհրդանշող Օսմանյան կայսրության անկումը, Թուրքիայում ազգայնական ուժերի հաղթանակը նպաստեցին պանիսլամիզմի հակադիր տեսությունների, մասնավորապես, ազգայնականության ակտիվացմանը: Երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Մերձավոր և Միջին Արևելքի իսլամադավան երկրներից շատերը ազատագրվեցին գաղութային լծից և ազգային անկախ ու ինքնիշխան պետություններ ստեղծվեցին, ազգայնականությունը դարձավ իշխող ուղղություն քաղաքական մտքի մեջ: Միևնույն ժամանակ, իսլամը չդադարեց կարևոր դեր խաղալ մահմեդական ժողովուրդների հոգևոր, սոցիալական և մշակութային կյանքը համախմբելու հարցում:

[13]Rosenthal E., Political Tought in Medieval Islam, Cambridge, 1962.
[14]Петрушевский И., Ислам в Иране, Л., 1966.
[15]Степанянц М., Мусульманские концепции в философии и политике XIX-XX вв., М., 1982.
[16]Шарипова Р., Движение исламской солидарности. Основные теоретические концепции. В кн: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987.
[17] Oda O., The Concept of Ummah in the Quran, Orient, 1987, No. 20.

Իսլամական կոնֆերանս կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ լուրջ գործունեություն ծավալվեց 1960-ականներից՝ իսլամական աշխարհին հուզող խնդիրները լուծելու և միջիսլամական համագործակցություն իրականացնելու նպատակով: Նման նախաձեռնությամբ հանդես եկավ Սաուդյան Արաբիան, որը Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի աջակցությամբ, ձգտում էր ամրապնդել իր դիրքերը մահմեդական աշխարհում և ազգայնականությանը հակակշռել իսլամական միասնության կարգախոսներով: Կրոնա-քաղաքական դաշինքի ստեղծմանը դեմ արտահայտվեցին ազգայնական վարչակարգեր ունեցող իսլամական մի շարք երկրներ, մասնավորապես, Եգիպտոսը: Դեպքերի ընթացքը, սակայն, փոխեց 1967թ. արաբա-իսրայելական պատերազմում արաբների պարտությունը, ապա 1969թ. օգոստոսին իսլամական երեք սրբավայրերից մեկի՝ Երուսաղեմի ալ-Ակսա մզկիթի, հրկիզումը: Ստեղծված պայմաններում հրատապ էին Պաղեստինի և իսլամական սրբավայրերի պաշտպանության հարցերը, որոնք հայտնվել էին իսլամական աշխարհի ուշադրության կիզակետում: Չնայած իսլամական պետությունների միջև գոյություն ունեցող ներքին հակասություններին, 1969թ. սեպտեմբերի 22-ին Ռաբաթում հաջողվեց հրավիրել ԻԿԿ հիմնադիր համագումարը: Առաջին անգամ միջազգային ասպարեզում ի հայտ եկավ կրոնաքաղաքական մի կազմակերպություն, որին միավորում էին ոչ թե տնտեսական կամ աշխարհաքաղաքական գործոնները, այլ կրոնը՝ իսլամը, որի շուրջ համախմբվեց ողջ իսլամական աշխարհը: Իսլամական պետությունների համագործակցությունը հաստատեց, որ նրանք պատկանում են «իսլամի աշխարհին» և խորհրդանշեց քաղաքական, տնտեսական, մշակութային ինքնուրույն կյանք վարելու նրանց ընդհանուր ձգտումը:

<u>Երկրորդ ենթաբաժնում</u> հետազոտվում են ԻԿԿ հիմնական սկզբունքները, նպատակները և կառուցվածքը: Ճիշտ է, ԻԿԿ հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1969-ին, սակայն նրա կանոնադրությունն ընդունվեց միայն երեք տարի անց, 1972-ին: ԻԿԿ հիմնական նպատակներն են՝ աջակցել անդամ պետությունների միջև իսլամական համերաշխության ամրապնդմանը, համագործակցության զարգացմանը տնտեսական, սոցիալական, մշակութային, գիտական և կենսական այլ բնագավառներում, ջանքեր գործադրել վերացնելու ռասայական խտրականությունը և արմատախիլ անել գաղութատիրությունը իր բոլոր ձևերով, համադրել իսլամական սրբավայրերի պահպանությանն ուղղված բոլոր միջոցառումները, աջակցել Պաղեստինի ժողովրդի պայքարին և այլն: ԻԿԿ անդամ պետությունները վերը նշված նպատակներն իրագործելու համար առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝ անդամ պետությունների միջև պահպանել լիակատար հավասարություն, հարգել ազգերի ազատ ինքնորոշման և անդամ պետությունների ներքին գործերին չմիջամտելու իրավունքը, հարգել յուրաքանչյուր անդամ պետության ինքնիշխանությունը, անկախությունը և տարածքային ամբողջականությունը, ամեն մի հակամարտություն, որը կարող է ծագել, կարգավորել խաղաղ ճանապարհով,

ինչպիսիք են՝ բանակցությունները, միջնորդությունները և այլն, ձեռնպահ մնալ յուրաքանչյուր անդամ պետության տարածքային ամբողջականության, ազգային միասնության կամ քաղաքական անկախության նկատմամբ սպառնալիքի և ուժի գործադրումից:

ԻԿԿ գերագույն մարմիններն են՝ պետությունների ղեկավարների գագաթաժողովը և արտաքին գործերի նախարարների կոնֆերանսը: ԻԿԿ գործադիր մարմինը՝ գլխավոր քարտուղարությունը, գտնվում է Ջիդդայում մինչև «Երուսաղեմի ազատագրումը»:

ԻԿԿ կարևոր մարմիններից են՝ *Իսլամական Արդարության դատարանը, Իսլամական պառլամենտների միությունը,* և այլն:

ԻԿԿ շրջանակներում գործում են մի շարք հանձնաժողովներ ու օժանդակ կառույցներ, որոնք գործնականում իրականացնում են ԻԿԿ որոշումներն ու իրենց աշխատանքային գործունեությամբ մեծապես աջակցում միջիսլամական համագործակցությանը ամենատարբեր բնագավառներում: Այս գլխի երրորդ ենթաբաժինը նվիրված է հիշյալ խնդիրների լուսաբանությանը: Հիշատակության են արժանի՝ *Տնտեսական և առևտրական համագործակցության, Տեղեկատվության և մշակույթի, Գիտական և տեխնիկական համագործակցության, Իսլամական մայրաքաղաքների և քաղաքների, Առևտրի և արդյունաբերության իսլամական պալատի, Նորությունների միջազգային իսլամական գործակալության, Իսլամական պատմության, արվեստի և մշակույթի ուսումնասիրության կազմակերպությունները* և այլն:

ԻԿԿ-ին կից գործում են նաև ժամանակավոր հանձնաժողովներ, որոնք ստեղծվում են իսլամական շրջանակներում հակամարտության կամ ճգնաժամի առաջացման դեպքում և լուծարվում՝ ճգնաժամի կարգավորումից հետո: Այդպիսիք են՝ *Պաղեստինի, Երուսաղեմի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Աֆղանստանի* և այլ հանձնաժողովները: Եղած փաստերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ԻԿԿ-ն ունի բավական կուռ կառուցվածք և կազմակերպությունների համարյա ամբողջ աշխարհն ընդգրկող լայն ցանց, որի շնորհիվ նա կարողանում է գաղափարական-քարոզչական ակտիվ աշխատանք ծավալել՝ նպաստել իսլամի միջազգային դիրքերի ամրապնդմանը, իսլամական մշակույթի և ուսմունքի տարածմանը, իսլամական կրթական համակարգի զարգացմանը:

Այնուհետև, նույն գլխի չորրորդ ենթաբաժնում քննարկվում են միջիսլամական տնտեսական համագործակցության խնդիրները, այդ թվում՝ *Զարգացման իսլամական բանկի (ԶԻԲ)* կառուցվածքն ու գործունեությունը: ԻԿԿ գործունեության սկզբնական շրջանում, երբ տնտեսության բնագավառում իսլամական պետությունների միջև նոր էր սկսվում ձևավորվել համագործակցությունն, բանկային համակարգ կազմավորելու անհրաժեշտություն առաջացավ: Բանկի կայացման հարցում վիթխարի նշանակություն ունեցան նավթային հասույթից ստացված ռոյալտիները, որոնք հիմնականում ներդրվեցին

արաբական նավթարդյունաբերող պետությունների կողմից և կազմեցին բանկի ֆինանսական գործունեության հիմքը: ԶԻԲ-ի հիմնական նպատակն է՝ աջակցել ԻԿԿ անդամ պետությունների, մահմեդական ժողովուրդների և համայնքների տնտեսական և սոցիալական զարգացմանը՝ համաձայն շարիաթի, որը իսլամական երկրներում կապահովի «Ումմայի շահերից բխող ներդաշնակ և հավասարակշռված զարգացում»: ԶԻԲ-ին անդամակցելու հիմնական պայմանը ԻԿԿ անդամ լինելն է և անդամավճարները մուծելը: Բանկի բարձրագույն մարմիններն են՝ կառավարիչների և գործադիր տնօրենների խորհուրդը: ԶԻԲ-ը ԻԿԿ համակարգում ձգտում է խաղալ այնպիսի դեր, ինչպես Համաշխարհային բանկը՝ կապիտալիզմի աշխարհում: ԶԻԲ-ը զարգացմանը օժանդակող կառույց է, որի գործառույթներն են՝ մասնակցել կառուցողական ծրագրերի և նախաձեռնությունների ֆինանսավորմանը, աջակցել անդամ երկրներում առևտրի, էներգիայի և հաղորդակցությունների, նաև՝ տեխնիկական զարգացմանը, տեխնոլոգիաների փոխանակմանը: Բանկը հիմնում է հատուկ ֆոնդեր, որոնք նախատեսված են անդամ երկրների տնտեսական, սոցիալական, ֆինանսական զարգացման համար, ներառյալ ոչ իսլամական երկրներում իսլամական փոքրամասնությունների օգնությունը: Մշակվում են պարտքերը մարելու, տնտեսական վնասները կանխելու ծրագրեր, հետազոտություններ են անցկացվում անդամ երկրներում ֆինանսական և բանկային գործունեություն ծավալելու համար:

Տնտեսական համագործակցության նպատակը ինտեգրացված իսլամական համայնքն է, տնտեսական մեծ բլոկների ստեղծումը, որը թույլ կտա համաշխարհային տնտեսական համակարգում ստեղծել իսլամական տիպի տնտեսություն, պատվարել գլոբալիզացման վտանգը, իրականացնել համընդհանուր իսլամական շուկայի գաղափարը՝ առանց վնաս հասցնելու անդամ պետությունների ազգային և տարածաշրջանային հետաքրքրություններին: Ակնհայտ է, որ միջսլամական տնտեսական ինտեգրացումը իսլամի գլոբալ ռազմավարության օրգանական մասն է:

Ատենախոսության ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԻՍԼԱՄԻ ԳԼՈԲԱԼ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ», նվիրված է Իսլամական կոնֆերանս կազմակերպության գաղափարական-քաղաքական հայեցակարգին, ինչպես նաև՝ արաբա-իսրայելական, Կիպրոսի, աֆղանական, բոսնիական, իսլամական փոքրամասնությունների և միջիսլամական հակամարտությունների ու միջազգային խաղաղության և անվտանգության հարցերի վերաբերյալ ԻԿԿ դիրքորոշման ուսումնասիրությանը:

Գլխի առաջին ենթաբաժնում վերլուծության են ենթարկվում ԻԿԿ գաղափարական-քաղաքական հայեցակարգը, որը հնարավորություն է տալիս լիարժեք և ամբողջական պատկերացում կազմել աշխարհի բոլոր մահմեդական պետություններին միավորող

կազմակերպության, նրա գործունեության, դերի և տեղի մասին: ԻԿԿ գաղափարական-քաղաքական հայեցակարգը հիմնվում է երեք հիմնարար սկզբունքների վրա, որոնք են՝ իսլամական ազգի՝ Ումմայի հասկացությունը, համաձայն որի բոլոր մահմեդականները պատկանում են մեկ՝ իսլամական ազգին, միջիսլամական ինտեգրացումը և աշխարհում իսլամի տարածումը և նրա դիրքերի ամրապնդումը:

Սույն գլխի երկրորդ ենթաբաժնում քննարկվում է ԻԿԿ դիրքորոշումը պաղեստինյան հակամարտության և Երուսաղեմի հարցում, որը «իսլամական Ումմայի գլխավոր խնդիրն է»: ԻԿԿ գործունեության մեջ առանձնացվել են պաղեստինյան հակամարտության հետևյալ հիմնական ուղղությունները՝ Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքները վերականգնելու և արաբական գրավյալ տարածքներում Իսրայելի ագրեսիայի հետևանքները վերացնելու հարցը, Երուսաղեմի և իսլամական սրբավայրերի հարցը, տարածաշրջանային իրադրության, Իսրայելի և նրա դաշնակիցների վրա ազդելու ուղիներ և ձևեր ընտրելու ռազավարությունը և մերձավորարևելյան խաղաղության գործընթացը:

Մերձավորարևելյան ճգնաժամի կարգավորման համաիսլամական ծրագիրն ընդգրկում է Իսրայելի ռազմական ուժերի անվերապահ հեռացումը 1967թ. գրաված արաբական տարածքներից, Պաղեստինի ժողովրդի օրինական իրավունքների վերականգնումը, պաղեստինյան արաբական պետության ստեղծումը Հորդանան գետի արևմտյան ափին և Ղազայի հատվածում՝ Երուսաղեմ մայրաքաղաքով:

Պաղեստինի ժողովրդին աջակցելու և արաբական գրավյալ տարածքները ազատագրելու համար ԻԿԿ-ն պատրաստ է օգտագործել անդամ պետությունների քաղաքական, ֆինանսական, տնտեսական, ռազմական ներուժը՝ ընդդեմ իսրայելական ագրեսիայի: Այս բաժնի ուսումնասիրությունը ներկայացված է ԻԿԿ աղբյուրների և փաստական նյութերի հիման վրա: Նշվում է այն դերը, որ ԻԿԿ-ն խաղացել է արաբա-իսրայելական հակամարտության հարցում Իսրայելին հակազդելու ուղղությամբ: Այս հարցում ԻԿԿ-ի որոշումներն արտահայտում են իսլամական պետությունների միասնական կեցվածքը:

Երրորդ ենթաբաժինը նվիրված է ԻԿԿ-ի քաղաքական, նյութական, բարոյական աջակցությանը 1974թ. Կիպրոսում թուրքական ինտերվենցիայի և 1983թ. «Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության» («ՀԿԹՀ») հռչակման խնդիրներին: Կիպրոսի հարցը ԻԿԿ-ում բարձրացրեց Անկարան, որը ձգտելով միջազգային շրջանակների կողմից օրինականացնել թուրքական ինտերվենցիան, ակնկալում էր ԻԿԿ-ի կողմից «ՀԿԹՀ»-ի ճանաչումը: Չնայած Կիպրոսի հարցում դրսևորված համերաշխությանը և անթաքույց համակրանքին «ՀԿԹՀ»-ի անկախությանը, ԻԿԿ-ն չկարողացավ անտեսել ՄԱԿ-ի և միջազգային հանրության բացասական դիրքորոշումն այդ հարցում և չճանաչեց այդ ոչ

օրինական կազմավորումը: Ճիշտ է, Կիպրոսի թուրքական համայնքը ԻԿԿ-ի լիիրավ անդամ չէ, սակայն օգտվում է դիտորդի իրավունքներից:

Չորրորդ ենթաբաժնում ներկայացվում է Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը աֆղանական թնջուկի նկատմամբ: 1979-ից աֆղանական խնդիրը իսլամական աշխարհի ուշադրության կենտրոնում է: ԻԿԿ-ն դատապարտել է խորհրդային ինտերվենցիան, կոչ է արել անհապաղ դուրս բերել զորքերն այս երկրից, հարգել Աֆղանստանի ինքնիշխանությունը, ամբողջականությունը և իսլամական բնույթը: ԻԿԿ շրջանակներում քննարկվել է նաև խորհրդային զորքերի դուրս գալուց հետո Աֆղանստանում տիրող իրադրությունն ու մոջահեդների միջև սկսված հակամարտությունը: Ուսումնասիրության առարկա է դարձել նաև 1994-ից Աֆղանստանի քաղաքական դաշտում հայտնված «Տալիբան» շարժման, ինչպես նաև ԱՄՆ-ում 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո Աֆղանստանում «Տալիբանի» և նրա դաշնակիցի՝ ահաբեկչության մեջ մեղադրվող «ալ-Կաիդա» խմբավորման ղեկավար Ուսամա Բեն Լադենի դեմ ԱՄՆ-ի կողմից հատուցման ռազմական գործողություններ իրականացնելու հարցում կազմակերպության դիրքորոշումը:

ԻԿԿ-ն կոչ է արել անհապաղ դադարեցնել եղբայրասպան պատերազմը Աֆղանստանում: ԻԿԿ-ն աֆղանական խնդրի կարգավորման համար առաջարկել է Աֆղանստանում ստեղծել կոալիցիոն կառավարություն, որը կներկայացնի այս երկրի խայտաբղետ էթնիկ պատկերը: 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունից հետո չնայած ԻԿԿ անդամ պետությունները պատրաստակամություն հայտնեցին ԱՄՆ-ի հովանու ներքո պայքարել միջազգային ահաբեկչության դեմ, սակայն մերժեցին Աֆղանստանին կամ իսլամական արաբական որևէ պետությանը ցանկացած պատրվակով թիրախ դարձնելը:

Հինգերորդ ենթաբաժնում քննարկվում է վերջին մի քանի տարիներին նախկին Հարավսլավիայի մահմեդականներին առնչվող հակամարտությունների հարցում ԻԿԿ-ի ակտիվ դերակատարությունը: Մասնավորապես Բոսնիայի և Հերցեգովինայի խնդրում կազմակերպության դիրքորոշումը միջազգային հանրությանը ցույց տվեց իսլամական պետությունների վճռականությունը՝ պաշտպանելու ամբողջ աշխարհի մահմեդականներին: ԻԿԿ-ն աջակցել է Բոսնիայի և Հերցեգովինայի հաղթական դիմադրությունը սերբական հարձակման դեմ և իր աջակցությունը հայտնել ինքնիշխան, ժողովրդավար և բազմազգ Բոսնիա և Հերցեգովինա պետության կայացման գործընթացին:

Այս ենթաբաժնում քննության է ենթարկվում նաև Կոսովոյի մահմեդական ալբանացիների նկատմամբ սերբական իշխանությունների քաղաքականությունը և այդ հարցում ԻԿԿ-ի դիրքորոշումը: Համաիսլամական ծրագրի համաձայն, Կոսովոյի մահմեդականներին պետք է հնարավորություն տալ ազատ կերպով ձևավորելու

քաղաքական ինստիտուտներ, որը հնարավորություն կտա պաշտպանելու մահմեդականների քաղաքական ու ազգային իրավունքները:

Այնուհետև, <u>վեցերորդ ենթաբաժնում</u> քննարկվում է ԻԿԿ-ի աջակցությունը մահմեդական փոքրամասնություններին, մասնավորապես Բուլղարիայի թուրք մահմեդականներին, Ֆիլիպինների Մորո մահմեդական համայնքին, Ջամմու և Քաշմիրի, ինչպես նաև՝ Չեչնիայի մահմեդականներին: Այս փաստերը վերստին ապացուցում են ԻԿԿ-ի անվերապահ աջակցությունը և պաշտպանությունը մահմեդական փոքրամասնությունների էթնիկական, քաղաքական և ազգային շարժումներին:

<u>Յոթերորդ ենթաբաժինը</u> նվիրված է միջիսլամական հակամարտությունների, մասնավորապես, իրանա-իրաքյան պատերազմի և Քուվեյթում Իրաքի ագրեսիայի նկատմամբ ԻԿԿ քաղաքականության ուսումնասիրությանը: Իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում ԻԿԿ-ն չպաշտպանեց հակամարտող կողմերից որևէ մեկին, չնայած Իրաքի նկատմամբ ունեցած համակրանքին, որն առաջացրեց Իրանի դժգոհությունը: ԻԿԿ-ն անհանգստություն հայտնեց պատերազմի և նրա պատճառած ահռելի մարդկային և նյութական կորուստների համար և հակամարտող կողմերին կոչ արեց անհապաղ դադարեցնել պատերազմը:

ԻԿԿ-ն դատապարտեց 1990թ. օգոստոսին Քուվեյթ անկախ պետության գրավումը Իրաքի կողմից և պահանջեց Իրաքից անհապաղ դուրս բերել ռազմական ուժերը Քուվեյթից: Նա իր մերժողական վերաբերմունքը հայտնեց Իրաքի իշխանությունների անհանդուրժողականության նկատմամբ: Իրաքի կողմից ՄԱԿ-ի և համաշխարհային հանրության կարծիքը անտեսելը իր վերջո հանգեցրեց ԱՄՆ-ի գլխավորությամբ «Փոթորիկ անապատում» ռազմական գործողություններին Իրաքի դեմ 1991թ հունվարի 30-ին, որին մասնակցեցին նաև ԻԿԿ անդամ արաբական իսլամական մի շարք պետություններ, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, Սիրիան, Պարսից ծոցի արաբական երկրները, Թուրքիան և այլն: Պատերազմում Իրաքը պարտվեց, Քուվեյթը վերականգնեց իր ինքնիշխանությունը:

Այնուհետև, այս գլխի վերջին՝ <u>ութերորդ ենթաբաժնում</u> քննարկման հիմնական խնդիրներ են ԻԿԿ-ի դիրքորոշումը միջազգային կարևորություն ունեցող մի շարք հարցերի, այդ թվում՝ սպառազինությունների, ահաբեկչության ու անվտանգության վերաբերյալ: ԻԿԿ-ն առաջարկում է երկրագնդի առանձին շրջաններում (մասնավորապես Աֆրիկայում, Մերձավոր Արևելքում, Հարավ-արևելյան Ասիայում) միջուկային զենքերից զերծ գոտիներ ստեղծել: ԻԿԿ-ն դատապարտում է միջազգային ահաբեկչությունը, որի դեմ պայքարելու համար կարևորում է իսլամական համերաշխությունը: ԻԿԿ-ն մտահոգություն է հայտնում ահաբեկչական այն գործողությունների նկատմամբ, որոնց մասնակից են մահմեդականները, և օգտագործում են իսլամը շահադիտական նպատակների համար: Միևնույն ժամանակ,

ԻԿԿ-ն ժխտական վերաբերմունք ունի իսլամական շրջանակներին, մասնավորապես պաղեստինիցիներին, ահաբեկչության մեջ մեղադրելու հարցում: Համաձայն ԻԿԿ-ի որդեգրած դիրքորոշման, անհրաժեշտ է տարբերակում մտցնել ահաբեկչության և ազգային-ազատագրական ու ժողովրդական պայքարի միջև, որը հաճախ որակվում է իբրև ահաբեկչություն: ԻԿԿ-ն խստագույնս դատապարտեց 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը ԱՄՆ-ի դեմ և մերժեց որևէ կապ տեսնել ահաբեկչության և իսլամական ու արաբական ժողովուրդների՝ հանուն ինքնորոշման, ինքնապաշտպանության, ինքնիշխանության, Իսրայելի և օտար տիրապետության դեմ պայքարելու իրենց իրավունքների միջև:

ԻԿԿ-ն սահմանել է իսլամական պետությունների անվտանգության վերաբերյալ իր դիրքորոշումը, համաձայն որի յուրաքանչյուր իսլամական պետության անվտանգությունը վերաբերում է բոլոր իսլամական պետություններին: ԻԿԿ-ն մերժում է միջազգային հարաբերություններում ուժի օգտագործումը և անդամ պետությունների ներքին գործերին միջամտելը:

Սակայն հարկ է նշել, որ ԻԿԿ-ն չունի ընդհանուր անվտանգության համակարգ և ոչ էլ միացյալ իսլամական ռազմական ուժեր: Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ԻԿԿ-ի լծակները դեռևս հզոր չեն՝ ազդելու քաղաքական այն գործընթացների վրա, որոնք առնչվում են մահմեդականների անվտանգությանը և պաշտպանությանը:

Ատենախոսության ԵՐՐՈՐԴ՝ «ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ» գլուխն անդրադառնում է ղարաբաղյան հակամարտության պատմական և իրավական կողմերին, Լեռնային Ղարաբաղի հարցում ԻԿԿ դիրքորոշմանը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության ու իսլամական աշխարհի միջև հարաբերությունների զարգացման հեռանկարին:

Գլխի <u>առաջին ենթաբաժնում</u> համառոտ ներկայացված է ղարաբաղյան հակամարտության պատմությունը և ընթացքը: Լեռնային Ղարաբաղի հայերի պահանջը արդարացի է և ելնում է ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքից: Քննարկվում են ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ միջազգային շրջանակների ջանքերը, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում, հատկապես Թուրքիայի ռազմավարությանը, որն աչքի է ընկնում իր առանձնահատուկ շահագրգռվածությամբ՝ խնդիրն անպայման ադրբեջանական կողմի օգտին լուծելու քաղաքականությամբ:

1992թ. Ադրբեջանը դարձավ ԻԿԿ-ի անդամ: Բաքուն ձգտում էր օգտագործել կազմակերպության քաղաքական, տնտեսական և ֆինանսական ներուժը և ստանալ այդ կազմակերպության աջակցությունը Լեռնային Ղարաբաղի հարցում:

Երկրորդ ենթաբաժինը նվիրված է Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ԻԿԿ դիրքորոշման ուսումնասիրությանը: Մանրամասն ներկայացված է 1992թ. ԻԿԿ պատվիրակության այցելությունը Երևան և նրա հանդիպումներն ու բանակցությունները ՀՀ իշխանությունների հետ՝ կապված ղարաբաղյան հակամարտության հետ: Դա կարելի է որոշ իմաստով բնութագրել որպես միջնորդական առաքելության փորձ:

ԻԿԿ-ն ղարաբաղյան հարցի կապակցությամբ ընդունած բանաձևերի, որոշումների և հայտարարությունների մեջ դատապարտել է հայկական «ագրեսիան» Ադրբեջանի դեմ՝ Հայաստանից պահանջելով անհապաղ և առանց նախապայմանների դուրս բերել զորքերը ադրբեջանական «գրավյալ տարածքներից», ներառյալ Լաչինը և Շուշին: Անդամ պետություններին, ինչպես նաև միջազգային հանրությանը կոչ է արվել օգտագործել քաղաքական և տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու «ադրբեջանական տարածքների բռնազավթմանը»:

ԻԿԿ-ի հետ հարաբերությունների ընթացքում Հայաստանի իշխանությունները և դիվանագիտական շրջանակները բազմիցս փորձել են պարզաբանումներ տալ ղարաբաղյան հակամարտության էության, խաղաղ լուծում գտնելու Հայաստանի ջանքերի մասին: Սակայն բացառապես ադրբեջանական աղբյուրներին ապավինելը կազմակերպությանը թույլ չի տալիս հիշյալ խնդրի վերաբերյալ օբյեկտիվ դիրքորոշում գրավել: Համաձայն հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման համաիսլամական ծրագրի, զիջումներ պետք է անի միայն Հայաստանը, իսկ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը չպետք է փոփոխվի: Հակամարտությունը պետք է կարգավորվի ԵԱՀԿ շրջանակներում ընթացող բանակցությունների միջոցով: ԻԿԿ-ն կոչ է արել միջազգային իսլամական ֆինանսական կառույցներին, այդ թվում՝ Զարգացման իսլամական բանկին և իսլամական բոլոր պետություններին, դրամական և այլ կարգի օգնություններ տրամադրել Բաքվին՝ ադրբեջանցի գաղթականներին օգնելու համար: Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ԻԿԿ-ն քննարկում է իսլամական համերաշխության համատեքստում՝ առաջնորդվելով տարածքային ամբողջականության պահպանման սկզբունքով, որով անտեսվում են խնդրի քաղաքական, պատմական, իրավական, էթնիկ և լեզվա-մշակութային կողմերը:

Այնուհետև, նույն գլխի երրորդ ենթաբաժնում լուսաբանվում է Հայաստանի և իսլամական աշխարհի միջև հարաբերությունների զարգացման հեռանկարը՝ հաշվի առնելով ԻԿԿ-ի գործոնը: Միջազգային հարաբերությունների արդի փուլում Հայաստանը բավական սերտ և բարեկամական կապեր ունի ԻԿԿ անդամ մի շարք պետությունների հետ: Առանձնացնենք, մասնավորապես, արաբական աշխարհը, որը կարևոր դեր ունի Մերձավոր և Միջին Արևելքի ռազմավարական-աշխարհաքաղաքական համակարգում: Այսօր արաբական երկրներից շատերի հետ հաստատվել են բազմակողմ և բարեկամական

հարաբերություններ: Արաբական երկրները Լեռնային Ղարաբաղի հարցում առաջնորդվում են միջազգային հանրության կողմից ընդունված՝ պետությունների տարածքային ամբողջականության պահպանման, ազգերի ինքնորոշման իրավունքի հարգման և հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու սկզբունքներով:

ԻԿԿ անդամ պետություններից առանձնապես կարևոր է նաև Իրանի դերը, որի հետ Հայաստանը բարեկամական և բազմակողմանի հարաբերություններ է հաստատել: Իրանը մինչև օրս հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միջնորդության առաջարկով: Անժխտելի է այն հանգամանքը, որ Հայաստանը և Իրանը ներկա աշխարհում ունեն բազմաթիվ ընդհանուր, այդ թվում նաև ռազմավարական շահեր ու ավանդական կապեր:

ԻԿԿ անդամ պետություններից Հայաստանը բարեկամական հարաբերություններ ունի նաև Կենտրոնական Ասիայի իսլամական հանրապետությունների հետ: Հայտնի է, որ Հայաստանը ԱՊՀ երկրների կոլեկտիվ անվտանգության կազմակերպության վեց անդամներից մեկն է: Նրա մյուս անդամներն են, Ռուսաստանից և Բելոռուսից բացի, նաև Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկիստանը, որոնք ԻԿԿ անդամներ են:

Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ԻԿԿ-ի վերաբերմունքը ՀՀ-ի նկատմամբ չի կարող ստվեր գցել Հայաստանի և իսլամական պետությունների միջև հարաբերությունների հետագա զարգացմանը: Ամեն պարագայում, Հայաստանը պետք է հաշվի առնի միջազգային հարաբերություններում իսլամական գործոնի ազդեցությունը և փորձի չեզոքացնել իսլամական աշխարհում իր համար ոչ բարենպաստ երևույթները: Անհրաժեշտ է շարունակել ԻԿԿ շրջանակներում ղարաբաղյան հակամարտությունը օբյեկտիվորեն լուսաբանելու աշխատանքները, նկատի առնելով նաև այն, որ Ադրբեջանը շարունակում է Հայաստանի դեմ իր քարոզարշավը:

ԵԶՐԱՓԱԿՄԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, ատենախոսը եզրակացնում է, որ՝ 1. ԻԿԿ-ն իր բնույթով կրոնա-քաղաքական կազմակերպություն է, որի գործունեությունը խարսխված է իսլամական սկզբունքների վրա: ԻԿԿ-ն ունի կուռ կառուցվածք՝ գլխավոր մարմիններ, գործադիր իշխանություն, մի քանի տասնյակից ավել կից և օժանդակ կառույցներ, որոնք սփռված են աշխարհով մեկ և նպաստում են անդամ պետությունների միջև համագործակցության զարգացմանը: 2. ԻԿԿ գաղափարական-քաղաքական հայեցակարգը հիմնվում է երեք հիմնարար սկզբունքների վրա, որոնք են՝ իսլամական ազգի՝ Ումմայի տեսությունը, համաձայն որի բոլոր մահմեդականներին միավորում է նույն կրոնը՝ իսլամը, միջիսլամական ինտեգրացումը և աշխարհում իսլամի քաղաքական դիրքերի ամրապնդումն ու իսլամի քարոզումը: 3. Միջազգային իրավունքի շրջանակներում, հանդես գալով որպես մի ինքնատիպ «Միացյալ իսլամական ազգերի կազմակերպություն», ԻԿԿ-ն քաղաքական, քարոյական և նյութական

աջակցություն է ցույց տալիս այն հակամարտություններին, որոնցում ընդգրկված են մահմեդականներ: 4. ԻԿԿ-ն հանդես է գալիս նաև իսլամական փոքրամասնությունների պաշտպանությամբ՝ ձգտելով իր հովանու ներքո համախմբել իսլամական Ումմային: 5. ԻԿԿ-ն կոորդինացնում է իսլամական պետությունների ինչպես ընդհանուր ռազմավարությունը, այնպես էլ դիրքորոշումը առանձին խնդիրների վերաբերյալ: ԻԿԿ-ի վերջնական նպատակը ինտեգրացված իսլամական համայնքն է և միասնական իսլամական քաղաքականության իրականացումը: 6. ԻԿԿ-ն իր ողջ գործունեության ընթացքում ձեռնպահ է մնացել ծայրահեղականությունից ու ֆունդամենտալիզմից՝ առաջ քաշելով աշխարհում խաղաղության և անվտանգության հաստատման, հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու, մարդու իրավունքների պաշտպանության, անդամ պետությունների ինքնիշխանության սկզբունքի հարգման և այլ գաղափարներ: 7. Չնայած գործադրված ջանքերին, ԻԿԿ-ին դեռևս չի հաջողվել ամբողջությամբ իրականացնել իր առաջ դրած խնդիրները, որին խոչընդոտող գործոններից հարկ է նշել՝ իսլամական պետությունների միջև սոցիալ-տնտեսական, քաղաքական զարգացումների տարբերությունները, գաղափարական և դավանաբանական անհամաձայնությունները, աշխարհաքաղաքական խիստ լայն ընդգրկումը և այլն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ:

1. Իսլամական կոնֆերանս կազմակերպության դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության վերաբերյալ, Երիտասարդ արևելագետների XX գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 1999, էջ 39-40:
2. Новые тенденции в межисламских отношениях. Вопросы арабистики (сборник статьей), вып. третий, ЕГУ, Ер., 1999, с. 35-41.
3. Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, կառուցվածքը և հիմնական նպատակները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIX, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2000, էջ 118-125:
4. Իսլամական համերաշխության շարժումը Իսլամական կոնֆերանս կազմակերպության համատեքստում, Երիտասարդ արևելագետների XXI գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2000, էջ 48-49:
5. Իսլամական կոնֆերանս կազմակերպության գործունեությունը Սառը պատերազմից հետո, Երիտասարդ արևելագետների XXII գիտական նստաշրջան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Զեկուցումների թեզիսներ, Եր., 2001, էջ 51-52:
6. Արաբա-թուրքական համագործակցությունը Կիպրոսի հարցում Իսլամական կոնֆերանս կազմակերպության շրջանակներում (1970-1980թթ.-ականներին), Հասարակական

գիտությունները XXI դարի շեմին, միջբուհական գիտաժողով, Զեկուցումների թեզիսներ, Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտ, Եր., 2000, էջ 92-94:
7. Իսլամական համերաշխության գործոնը և դարաբաղյան հակամարտությունը, Արևելք (հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2001, էջ 92-101:
8. Իսլամական կոնֆերանսը և դարաբաղյան հակամարտությունը, Մերձավոր և Միջին Արևելքի պատմամշակութային ավանդույթները և ժամանակակից զարգացումները, Իրանագիտության կովկասյան կենտրոն, Եր., 2001, էջ 35-38:

ПАШАЯН АРАКС АСАТУРОВНА

ОРГАНИЗАЦИЯ ИСЛАМСКАЯ КОНФЕРЕНЦИЯ

(1969-2001 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.02- "Всеобщая история"
Защита состоится 4-го апреля 2002 г. по адресу: 375019, г. Ереван,
просп. Маршала Баграмяна 24г, Институте востоковедения НАН РА

Р Е З Ю М Е

Представляемая работа посвящена изучению создания, структуры, основных целей, принципов деятельности, а также идейно-политических взглядов Организации Исламская Конференция (ОИК), которые имеют не только важное научное, но и политическое значение.

Очевидно, что создание и деятельность Организации Исламская Конференция обусловлены обстоятельством политизации ислама в международных отношениях, которое предполагает увеличение политического значения и роли ислама в политических процессах. В Организации Исламская Конференция постоянно предметом обсуждения является вопрос армяно-азербайджанского противостояния вокруг Нагорного Карабаха. Учитывая вышесказанное, становится понятной актуальность выбранной темы.

Целью работы является изучение механизма организации и ее развития за период между 1969-2001 гг., выявление различных проявлений межисламского сотрудничества, роли Организации Исламская Конференция в разработке общеисламской политики и в вопросе исламской солидарности, изучение позиции Организации Исламская Конференция в отношении конфликтов, касающихся мусульман, освещение идейно-политических взглядов организации.

Научная новизна работы состоит в том, что тема диссертации не являлась предметом специального исследования, хотя ее отдельные аспекты освещались как армянскими учеными, так и советскими и зарубежными специалистами.

Впервые системно и всесторонне представлены различные аспекты деятельности и структуры ОИК.

Диссертация является попыткой ответить на вопросы, которые и сегодня остаются актуальными среди которых принцип исламской нации-Уммы, политизация ислама и его причины, всеобщая стратегия исламских государств и т. д.

В I главе диссертации ("Основание Организации Исламская Конференция") освещаются исторические предпосылки создания и образования ОИК, ее структура, основные принципы и цели, а также вспомогательные и примыкающие структуры.

II глава диссертации ("Идейно-политические взгляды Организации Исламская Конференция и глобальная стратегия ислама") посвящена идейно-политическим взглядам ОИК, изучению ее роли в арабо-израильском, кипрском, афганском, боснийском конфликтах, а также конфликтов, касающихся мусульманских меньшинств и межисламских противоречий, освещению отношения ОИК в отношении вопросов международной безопасности и терроризма.

III глава диссертации ("Позиция Организации Исламская Конференция в вопросе карабахского конфликта") отражает исторические и правовые стороны карабахского конфликта, позицию ОИК в отношении армяно-азербайджанских противоречий относительно карабахской проблемы, а также перспективы развития отношений между Арменией и исламским миром.

На основании проведенного исследования в заключении диссертации сделаны выводы по основным рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки.

Работа может представлять интерес для дальнейшего изучения Организации Исламской Конференции, а также может быть использована при составлении лекционных курсов по истории ОИК. Положения и выводы диссертации могут быть использованы со стороны государственных органов Республики Армения при определении своей политики в отношении ОИК.

ARAKS A. PASHAYAN

THE ISLAMIC CONFERENCE ORGANIZATION (1969-2001)